ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՎԵՑԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ
2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 18-Ի ՀԵՐԹԱԿԱՆ
ԵՐԿՐՈՐԴ ՆԻՍՏ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՎԵՑԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2024 թվականի հոկտեմբերի 18-ին ժամը 16:00-ին քաղաք Էջմիածին, Սբ. Մ. Մաշոտցի 0 հասցեում գտնվող Վաղարշապատի համայնքապետարանի վարչականի շենքի առաջին հարկի ավագանու նիստերի դահլիճում տեղի ունեցավ Վաղարշապատ համայնքի ավագանու վեցերորդ նստաշրջանի երկրորդ նիստը, որին մասնակցեց Վաղարշապատ համայնքի ավագանու 20 անդամ՝ հիմք ընդունելով գրանցման արդյունքները՝ այդ մասին հայտարարեց նիստն արձանագրողը:

Վաղարշապատ համայնքի ավագանու վեցերորդ նստաշրջանի երկրորդ նիստին հրավիրված են համայնքային կառույցների ներկայացուցիչներ, համայնքապետարանի աշխատակիցներ: Նիստը վարում է համայնքի ղեկավարին փոխարինող, առաջին տեղակալ Արսեն Պետրոսյանը:

Նիստի արձանագրումն ապահովում է աշխատակազմի քարտուղար Գրիգոր Հարությունյանը:

Նիստն սկսվեց Հայաստանի Հանրապետության և համայնքի հիմներով:

Նիստն անցկացվում է առցանց հեռարձակմամբ:

Հրավիրված նիստին հարգելի պատճառներով՝ ամենամյա արձակուրդում գտնվելու պատճառով բացակայում է համայնքի ղեկավար Դիանա Գասպարյանը:

Ավագանու նիստին չներկայացած անդամների բացակայությունը համարվում է անհարգելի՝ հարգելիության վերաբերյալ տեղեկատվություն չներկայացնելու հիմքով:

Նիստը վարողը ավագանու անդամներին ներկայացրեց նիստի օրակարգի հարցերը:

Նիստը վարողը հայտարարեց, որ նախապես հրապարակված օրակարգի հարցերից դուրս է գալիս Վաղարշապատ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասն աճուրդային եղանակով օտարելու մասին հարցը:

Հաշվի առնելով վերոգրյալը, առաջարկվեց քննարկել ու հաստատել օրակարգը:

Օրակարգի նախագիծը դրվում է քվեարկության:

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 19 անդամ

Քվեարկության արդյունքները՝ կողմ - 19

դեմ – 0

ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

ՈՐՈՇՎԵՑ – Հաստատել Վաղարշապատ համայնքի ավագանու վեցերորդ նստաշրջանի 2024 թվականի հոկտեմբերի 18-ի երկրորդ նիստի օրակարգը և քննարկել առաջադրված հարցերը, այն է՝

1. ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԵՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 17-Ի ԹԻՎ 32-Լ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՀԱՎԵԼՎԱԾԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

3. ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՎԵՑԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԵՐՐՈՐԴ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վաղարշապատ համայնքի ավագանին ընդունեց թիվ 74-Լ որոշումը:

Նիստին ուշացումով ներկայացավ ավագանու անդամ Ռուբեն Ենոքյանը:

Օրակարգի 1-ին հարցի առթիվ՝ զեկույցը ներկայացրեց աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Լուսինե Քալաշյանը:

Ներկայացնելով Վաղարշապատ համայնքի 2024 թվականի երրորդ եռամսյակի բյուջեի կատարման մասին որոշման նախագիծը:

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր տալու համար ավագանու անդամներ չհերթագրվեցին:

Ավագանու անդամների մտքերի փոխանակման և հարցի քննարկման ավարտից հետո նախագահողը առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության:

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 20 անդամ

Քվեարկության արդյունքները՝ կողմ - 11

դեմ – 9

ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց ձայների մեծամասնությամբ

Վաղարշապատ համայնքի ավագանին ընդունում է թիվ 75-Լ որոշումը:

Օրակարգի 2-րդ հարցի առթիվ՝ զեկույցը ներկայացրեց համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Արսեն Պետրոսյանը:

Ներկայացնելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի ավագանու 2024 թվականի ապրիլի 17-ի թիվ 32-Լ որոշմամբ հաստատված հավելվածի մեջ փոփոխություններ կատարելու մասին որոշման նախագիծը:

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր տալու համար ավագանու անդամներ չհերթագրվեցին:

Ավագանու անդամների մտքերի փոխանակման և հարցի քննարկման ավարտից հետո նախագահողը առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության:

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 20 անդամ
Քվեարկության արդյունքները՝ կողմ - 20
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

Վաղարշապատ համայնքի ավագանին ընդունում է թիվ 76-Լ որոշումը:

Օրակարգի 3-րդ հարցի առթիվ՝ զեկույցը ներկայացրեց աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետի տեղակալ Վասպուրական Դավթյանը:

Ներկայացնելով Վաղարշապատի համայնքապետարանի սեփականություն հանդիսացող փոխադրամիջոցը աճուրդային եղանակով օտարելու մասին որոշման նախագիծը:

Քննարկվող հարցի վերաբերյալ հարցեր տալու համար հերթագրվեց ավագանու անդամ Ներսես Մելիքյանը և Ենոքյան Ռուբենը:

Հարց Ներսես Մելիքյան: Ո՞ր թվի արտադրման է ավտոն:

Պատասխան Վասպուրական Դավթյան: 2005 տարեթվի է:

Հարց Ռուբեն Ենոքյան: Որոծման 3-րդ կետով նախատեսված գումարի նվազեցման պարագայում, որքա՞ն անգամ կարող է նվազել աճուրդով վաճատվող գույքի մեկնարկային գինը:

Պատասխան Արսեն Պետրոսյան: Փոխադրամիջոցը կդրվի աճուրդի մինչև 15 անգամ և չվաճառվելու դեպքում հարցը կրկին կներկայացվի ավագնու քննարկման:

Ավագանու անդամների մտքերի փոխանակման և հարցի քննարկման ավարտից հետո նախագահողը առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության:

Ավագանու անդամների մտքերի փոխանակման և հարցի քննարկման ավարտից հետո նախագահողը առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության:

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 20 անդամ
Քվեարկության արդյունքները՝ կողմ - 20
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

Վաղարշապատ համայնքի ավագանին ընդունում է թիվ 77-Ա որոշումը:

Օրակարգի 4-րդ հարցի առթիվ՝ զեկույցը ներկայացրեց համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Արսեն Պետրոսյանը:

Ներկայացնելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի ավագանու վեցերորդ նստաշրջանի հերթական երրորդ նիստի գումարման օրը սահմանելու մասին որոշման նախագիծը:

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր տալու համար ավագանու անդամներ չհերթագրվեցին:

Ավագանու անդամների մտքերի փոխանակման և հարցի քննարկման ավարտից հետո նախագահողը առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության:

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 20 անդամ
Քվեարկության արդյունքները՝ կողմ - 20
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

Վաղարշապատ համայնքի ավագանին ընդունում է թիվ 78-Լ որոշումը:

Ավագանու նիստն ավարտվեց 2024 թվականի հոկտեմբերի 18-ին ժամը 16:50-ին:
Օրակարգի հարցերը սպառվելուց հետո Ավագանու նիստը հայտարարվեց փակված: